

Տեղեկատվական թերթիկ

Զարգացման և համագործակցության Շվեյցարիայի գործակալության Հարավային Կովկասի գրասենյակ

**Swiss Cooperation Office
South Caucasus**

Նոյեմբեր 2016թ.

Հայաստանի հարավում անասնապահության զարգացում Փուլ IV



Ծրագրի նպատակ

Ծրագրի ընդհանուր նպատակն է ստեղծել ընդլայնված տնտեսական հնարավորություններ և եկամուտներ Հայաստանի Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում անասնապահությամբ զբաղվող կին և տղամարդ ֆերմերների համար:

Հիմնավորում

Գյուղատնտեսությունը աշխատատեղերի հաշվով Հայաստանի տնտեսության ամենամեծ հատվածն է, որն ապահովում է երկրի բնակչության 37%-ի զբաղվածությունը: Այս հատվածը կարևորագույն դեր ունի երկրի տնտեսության մեջ՝ 2015թ. տվյալներով հաշվարկվելով ՀՆԱ-ի մոտ 22%: Մինևույն ժամանակ հայ ֆերմերները կազմում են բնակչության առավել խոցելի խումբը, որի մոտ 40%-ն ապրում է աղքատության մեջ: Սյունիքի և Վայոց Ձորի գյուղերում ապրող ֆերմերները հիմնականում արտադրում են սեփական սպառման համար և ունեն սահմանափակ հասանելիություն շուկային: Ինչպես և Հայաստանի ողջ տարածքում, այնպես էլ Սյունիքում և Վայոց Ձորում գյուղատնտեսության երկու հիմնական խնդիրներն են ցածր արդյունավետությունը և շուկայի սահմանափակ հասանելիությունը:

Տվյալներ

Երկիրը. Հայաստան, Սյունիքի և Վայոց Ձորի մարզեր

Տևողությունը. Սեպտեմբեր 2014թ. - օգոստոս 2020թ.

Բյուջե. 10'000'000 շվեյցարական ֆրանկ

Ծրագրի գործընկերները.

- ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
- ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
- Սյունիքի և Վայոց Ձորի մարզային իշխանություններ

Իրականացնող գործընկեր.

- Ռազմավարական զարգացման գործակալություն (ՌԶԳ) ՀԿ



Գործողություններ

Ծրագրի արդյունքների շահառուներն են Հայաստանի Սյունիքի և Վայոց Ձորի մարզերի 100 գյուղական համայնքների փոքր ֆերմերային տնտեսությունները (մոտավորապես 60'000 մարդ):

Այս ծրագրի շրջանակներում նախատեսված գործողություններն են.

- Կին և տղամարդ ֆերմերների համար բարելավել առավել արդյունավետ գործող կաթնամթերքի և մսամթերքի շուկայի հասանելիությունը
- Կին և տղամարդ ֆերմերների համար բարելավել ֆերմերային աջակցության ծառայությունների և նյութերի հասանելիությունը



- Բարելավել կին և տղամարդ ֆերմերների կարողությունները ֆերմերային նոր մոտեցումների և տեխնոլոգիաների ոլորտում

- Հզորացնել տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները աջակցելու անասնապահությանն առնչվող գյուղատնտեսության զարգացմանը

Ակնկալվող արդյունքները

Այս ծրագրի իրականացման ավարտին ակնկալվող արդյունքներն են.

- Վաճառված կաթի ծավալի աճ՝ հում կաթի հավաքման ենթակառուցվածքի և դրա արդյունավետության մակարդակի բարելավման միջոցով (30% աճ՝ համեմատ նախնական տվյալի)
- Վաճառված մսի ծավալի աճ՝ կենդանիների/մսի շուկայի ենթակառուցվածքի և դրա արդյունավետության մակարդակի բարելավման միջոցով (30% աճ՝ համեմատ նախնական տվյալի)
- Կին և տղամարդ ֆերմերների համար հասանելի արդյունավետ անասնաբուժական ծառայություններ
- Կենդանիների որակի/տոհմի բարելավում՝ արհեստական սերմնավորման և կենդանիների փոխարինման ծառայությունների հասանելիության մակարդակի բարելավման միջոցով
- Կին և տղամարդ ֆերմերների համար առավել հասանելի ֆինանսավարկային միջոցներ՝ այլընտրանքային արժեշրջանների ֆինանսավորման սխեմաների փորձարկման և իրականացման արդյունքում (3 նոր սխեմա)
- Կին և տղամարդ ֆերմերների համար հասանելի են կերի արտադրության համար անհրաժեշտ որակյալ նյութեր և ծառայություններ
- Ծառայություն/նյութ մատուցողները, տեղական գյուղատնտեսական ծառայություններ մատուցողները և արժեշրջանների այլ մասնակիցներ տեղերում տրամադրում են խորհրդատվություն/ծառայություն թիրախային տարածքում առկա ֆերմերների համար
- Ֆերմերները կիրառում են անասնապահության առաջադեմ մեթոդներ

- Տեղական և տարածաշրջանային կառավարման մարմիններն ունեն տվյալների կառավարման, մշակման և հաշվետվողականության հզորացված կարողություններ
- Տեղական և տարածաշրջանային կառավարման մարմիններն ունեն արոտավայրերի օգտագործման պլանավորման և կառավարման հզորացված կարողություններ
- Տեղական և տարածաշրջանային կառավարման մարմիններն ունեն բարձր/կենտրոնական կառավարության մակարդակում համապատասխան պետական հաստատությունների հետ քաղաքական երկխոսության մեջ մտնելու հզորացված կարողություններ



Կոնտակտային տվյալներ.

Ջարգացման և համագործակցության Շվեյցարիայի գործակալություն Հարավային Կովկասի գրասենյակ

Շվեյցարիայի դեսպանատուն
Մելիք Ադամյան փողոց 2/1
Երևան 0010, Հայաստան
Հեռախոս. +374 10 52 98 60
Ֆաքս. +374 10 52 98 61

www.swisscoop.am
www.facebook.com/SwissCooperationSouthCaucasus
yerevan@eda.admin.ch